

ՔԱՆԱՍՅԵՂԾԱԿԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

Արաւոյսին,
երկնքին մէջ կը մարէին
Ասղերն ամէն,
Ծոցն ամպերուն,
Դագաղներու առջեւ անցես,
Կը վառէին լոյսեր կապոյս:

Երբի վրայ,
Կը զբոգունէր մոմ մը վըսիս,
Քաղաքն անդին,
Կ'արթըննար իր խրոռվներէն,
Աչըներուն՝ երազ կարմիր:

Արաւոյս էր,
Բայց աշխարհը, վայրկեաններու
Դանակներով,
Իր երազները կը մորթէր:

Անդին, մարդեր գազանօրէն,
Ժամանակի հայելիէն
Կը դիտէին,
Ոնիրները գալիքներուն:

ԳԻՇԵՐԸ

Գիշերն է փրփրեր երկնքին վրայ,
Իր սիրամարգի ագին բազմաշեայ,
Մըռուէն ոսկի,
Սըլաֆներ կ'անցնին ասղերէ ասղի:

Գիսաւոր մ'անդին,
Վարազահաւի նըման նեճահար,
Իր այրող պոչէն՝ աստիւերու անհուն
Աչքերուն վրայ կը ցանէ մոխիր:

Գըլուխ մը ինչպէս իր մարմնէն գաս-
Ափսէին վրայ, [ուած,
Դարաւոր մեռել կապոյսներուն խոր՝
Լուսինն է հաճա:

Ու կը մըսածեմ թէ երազ է այս,
Երազն երկնքին,
Որ ամէն գիշեր, քաղցր ու խրոռվիչ,
Կը կրկնէ ինքզինքն:

Երազն ի՞նչ է որ, սուս մը գեղեցիկ:

ՎՏԱՐԱՆԴԻՆ

